

ՆԱՐԵԿԱՑՈՒ ԶԱՓԱԾՈՑԻ ՌԻԹՄԸ ԵՒ ՏԱՂԱԶԱՓԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ա. Ազատ եւ Կանոնաւոր Ոտանաւորների տաղաչափական Զեւերը

Դեռեւս անցեալ դարի վերջին Ա. Բահաթրեանը համոզուած յայտարարում էր, որ Նարեկացու «երկերը բերթուածներ են», որ նրանց մէջ «մեր աշխիւ կայում է մի յայտնի տաղաչափական նշան, այն է՝ հնգավանկ անդամների այնքան չափազանց առատութիւնը, որ նոցա մամուլութեամբ անկարելի է գտնել մի այլ արձակ գրութեան մէջ»(1): Բահաթրեանը նկատի ուներ ոչ միայն Նարեկացու տաղերն ու գանձերը, այլեւ ներթողները եւ Մատեանը: Տաղերի եւ գանձերի համար որպէս ապացոյց նա յղում է նրանցից ոմանց տնագլուխ տառերի «Գրիգորի երգ» բնականը, իսկ Մատեանի համար՝ *ողորբագրական* վերադիրը, որը Բահաթրեանի կարծիքով՝ «նշանակում է այնպիսի երկ որ ողորական է»(2): Բահաթրեանն իրաւացի է նաեւ, որ «Նարեկացու բերթուածների թէ՛ անուանակոչութեան եւ թէ՛ յօրինուածութեան բնաւորութիւնից կարելի է մակարերել, որ բերթողը իւր մանր երգերը որեւէ երաժշտական հղանակի էր յարմարում, քայց աղօթքները հաւանական է, թէ ընթերցանուում էին ունէ եղանակաւոր ձայնիւ այնքան ազատութեամբ, ինչքան որ նոցա աղօթական եւ տաղաչափական ազատ պայմանները կը ներէին»(3):

Որ Մատեանը չափածոյ ստեղծագործութիւն է, Բահաթրեանը կարող էր վկայակոչել հենց Նարեկացուն.

Եւ գի՞նջ է ինձ սակաւս եւ
նուազագոյնս յաւդել

Սահմանս կսկծելիս չափաբերականս,

*Մինչ անցեալ է ըստ քանակութիւնս
եւ վրիպեալ ըստ բժշկութիւնս:*

(Բան Ե, դ)

Այստեղ Նարեկացին իր երկը կոչել է *չափաբերական*, այլ առիթներով՝ *ողորբի նուագ* («այս պատուէր նկարագրական նորոգ մատենի ողորց նուագի» (Բան Գ, ք), *ուղղակի՝ երգ* («Եւ այժմ՝ գլանցիցն յանախութիւն ողորմելի ձայնիւ յերգ արկի»՝ Բան ԻԶ, գ) եւ այլն:

Հարցի լուսարանմանն աւելի հանգամանօրէն անդրադարձել է Մ. Աբեղեանը: Ըստ նրա՝ Նարեկացու գանձերը, մասամբ ներթողները եւ Մատեանի բնարական հատուածների մեծ մասը յօրինուած են «ազատ ոտանաւորներով, որոնց մէջ իշխող է հնգավանկ անդամը»(4): Եւ ապա՝ Նարեկեանն ոտանաւորը հոգեւոր երգերի նոյն տեսակի ոտանաւորից չունի այլ տարբերութիւն, քան այն, որ հոգեւոր երգերը մեծ մասամբ համաթիւ տողեր ունեցող փոքր տներով են յօրինուած, մինչդեռ Մատեանում ասացուածները ընդարձակելով՝ ծաւալում են մի շարք համեմատաբար երկար տողերի մէջ եւ միաւորում են մի գօրեղ մտքի մէջ՝ առանց որեւէ կանոնաւորութեան, առանց ձգտման՝ այդ հատուածները նոյնաթիւ տողերից կամ մօտաւորապէս հաւասարաչափ կազմելու: Անշուշտ, այնպէս, ինչպէս տպագրուած են իբրեւ արձակ գրութեաներ, ո՛չ Նարեկացու յիշուած երկերը եւ

ն'չ էլ մեր հոգեւոր երգերից շատերը, կարդալիս անմիջապէս չեն թողնում յանախ ոտանաւորի տպաւորութիւն: Հարկաւոր է, նախ՝ այդ բանաստեղծութիւնները տողատել, ապա՝ որոշել, թէ ո՞ր բառերի վրայ են խօսքի զգացական շեշտերը, եւ յետոյ նոր կարդալ, եւ այնուհետեւ նոր կը զգացուի մեծ թափով յօրինուած այդ բանաստեղծութեան ռիթմը»(5): Մ. Արեղեանն իրաւացի է նաեւ նշելով, որ Մատեանում «Կան, հարկաւ, եւ արձակ կտորներ», որոնք «խսկապէս ազատ ռիթմական կամ գեղարուեստական պրոզա են»(6):

Իրականացել է մեծանուն հայագէտի պահանջը. այսօր տողատուած հրատարակութեամբ եւ ձեռագրերի գիտաֆնական համեմատութեամբ հրապարակի վրայ են դրուած Նարեկացու ինչպէս տողերն ու գանձերը, այնպէս էլ Մատեանը: Այդ հրատարակութիւններն էլ հնարաւորութիւն են ընձեռում համակողմանի ֆնելու հայ հին եւ միջնադարեան բանաստեղծութեան տաղաչափական համակարգի, ռիթմիկ միաւորների կազմակերպման, չափի եւ կշռոյթի, յանգի եւ յարակից այլ հարցեր, որոնք թեւ հարդէն հարկւր յիսուն տարի առաջ հետաքրքրել են հայագէտներին, բայց այսօր էլ յարուցում են վէճեր, մղում գիտական նոր լուսարարութիւնների եւ ճշտման: Այս իմաստով վերջին շրջանի հետազոտութիւնների մէջ առանձնանում է էդ. Ջրբաշեանի «Լեզու եւ ոտանաւոր» ուսումնասիրութիւնը՝ նուիրուած հայկական տաղաչափութեան քննոյթի հարցերին: Ջրբաշեանը վերստին պաշտպանում է հայկական տաղաչափութեան վանկական համակարգի տեսութիւնը, ի տարբերութիւն Մ. Արեղեանի, որը գտնում էր, թէ հայկական ոտանաւորը «պատկանում է շեշտական կոշուած ոտանաւորների տեսակին»(7): Քննելով լեզուի եւ ոտանաւորի դիալեկտիկական

բարդ փոխարարներութիւնը, Ջրբաշեանն իրաւացիօրէն գտնում է, որ «Իր ընդհանուր գծերով ոտանաւորն անպայման բիտում է: ազգային լեզուի տարբերից, պայմանաւորուած է նրա կառուցուածքային պրոսոդիական յատկանիշներով»(8), այսինքն՝ լեզուի հնչիւնաբանական եւ շեշտադրութեան առանձնայատկութիւններով: Լեզուների մէջ թափնուած են տաղաչափական բազմազան հնարաւորութիւններ, որոնք «կեանքի եւ կոչում եւ իրականացում են, մի կողմից, բանաստեղծական բազմազանութեան մշտական եւ քնական ձգտման եւ, միւս կողմից, նրանց միջազգային փոխանցման եւ ազդեցութիւնների շնորհիւ»(9): Վանկա-շեշտական ոտանաւորներ կան նաեւ հայկական բանաստեղծութեան մէջ, հաւաստում է Ջրբաշեանը, սակայն «հայկական ոտանաւորն իր գերակշռող քննոյթով անպայման վանկական է, այսինքն՝ հիմնում է ոչ թէ շեշտերի կանոնաւոր դասաւորութեան, այլ վանկերի թուի հաւասարութեան վրայ՝ տողերում եւ, մանաւանդ, աւելի փոքր ռիթմական միաւորների՝ կիսատողերի եւ անդամների մէջ»(10): Ընդունելի է նաեւ Ջրբաշեանի այն պահանջը, որ պէտք է հրաժարուել «ոտանաւորի մէջ շեշտերի օրինաչափ եւ կանոնաւոր կարգ որոնելու փորձերից եւ չափածոյի ու ռիթմի հիմը տեսնել տողերի եւ անդամների վանկային-ֆանկական ցուցանիշների ու ռիթմական հատածների մէջ»(11): Հետեւաբար՝ հայկական ոտանաւորի չափի հիմքը Ջրբաշեանը տեսնում է նրա անդամների եւ կաշուն հատածների վանկական-ֆանկական հաւասարութեան մէջ: Այդ հիմքը նա համարում է ոչ թէ շեշտերի դասաւորութիւնը, այլ «չափական միաւորների վանկային հաւասարութիւնը», (12) (ընդգծումն իմն է - Ա. Դ.):

Այս բոլորը ճիշտ է: Բայց ճիշտ է

նաեւ այն, որ այս գրողները վերաբերում են կանոնաւոր տաղաչափական կառուցուածքներ ունեցող ոտանաւորներին, որոնք երեւան են եկել 11-12րդ դարերում՝ Գրիգոր Մագիստրոսի եւ Ներսէս Շնորհալու ստեղծագործութիւններին մէջ: «Իսկ աւելի վաղ ստեղծուած երկերը, այդ թւում նաեւ Գրիգոր Նարեկացու գործերը – գրում է Զրիւշեանը մէկ այլ առիթով – չունեն (փոքր քացառութեամբ) վանկերով հաւասար տողերի եւ կիսատողերի պարբերական կրկնութիւնից առաջացող ռիթմ, զարգանում են խօսքի անհաւասար հատածների խառը յաջորդականութեամբ» (13): Նշանակում է՝ հայկական տաղաչափութիւնը այլ բնոյթ է ունեցել 5-11րդ դարերում: Բնական է, որ հայոց հին տաղաչափութեան բնոյթը դառնար ուսումնասիրութեան առարկայ եւ, իսկապէս, 19րդ դարի առաջին կէսից այդ հարցի բնութեան անդրադարձել են շատերը՝ Ա. Բագրատունի, Ա. Այտընեան, Հ. Գաթըրեան, Գ. Զարբխալեան, Ղ. Յովնանեան, Ա. Բահաթրեան, Ստ. Մալխասեանց, Մ. Աբեղեան եւ ուրիշներ: Եւ այնուհանդերձ շատ հարցեր դեռեւս չեն ստացել իրենց վերջնական պատասխանը:

Յայտնի է, որ արձակ եւ չափածոյ խօսքի տարբերակման սկզբունքը հիմնուում է նրանց ռիթմական յատկանիշի վրայ: Արձակն աւելի մօտ է խօսքի բնական կառուցուածքին, մինչդեռ չափածոն յատուկ սկզբունքով կառուցուած խօսք է, պարփակուած առանձին ձեւական կանոնների մէջ, բաժանուած հաւասար միաւորների, որոնց կանոնաւոր կրկնութիւնից էլ առաջ է գալիս ռիթմի կանոնաւորութիւնը: Ռիթմի հիմնական միաւորը տողն է: Հետեւաբար, չափածոյ խօսքի առաջին յատկանիշն այն է, որ նա յստակօրէն բաժանուում է որոշակի տողերի, իսկ երկրորդ յատկանիշը կապուած է տողի չափի, հատածի, անդամների թուի

հետ: Հատածների եւ անդամների հաւասարութիւնը ստեղծում է տողի ռիթմը: Տողաւարտն ունի արտասահական դադար: Յաջորդ տողը կրկին վերահառնում է նոյն չափին: Տողերի ռիթմական հաւասարութիւնն էլ առաջ է բերում բանաստեղծութեան տների ռիթմական հաւասարութիւն: Յանգաւոր բանաստեղծութեան մէջ դա աւելի ակնհայտ է, քան անյանգ, առաւել եւս՝ ազատ ոտանաւորով գրուած բանաստեղծութեան մէջ: Թէեւ ոտանաւորը ծագում է երգից, եւ երգն էլ իրենից ներկայացրել է խօսքի եւ երաժշտութեան միասնութիւն, բայց հետագայում երգն ու ոտանաւորը քաժանուել են իրարից, հետեւաբար, ոտանաւորի ռիթմը չպետք է նոյնացնել երաժշտութեան տակտի հետ: Ոտանաւորի ռիթմական միջոցները չենուում են խօսքի եւ ոչ թէ երաժշտութեան ռիթմի սկզբունքների վրայ:

Տաղաչափագիտական հնագոյն հասկացութիւնները հայ իրականութեան մէջ տեղ են գտել Դիոնիսիոս Թրակացու քերականութեան գրքում: Յունարէնը ունի կարն եւ երկար ձայնաւորներ: Լատինները՝ եւս: Ոտքի միաւորը համարուել է կարն վանկի երկարութիւնը: Միւս ոտքերը կազմուել են կարն եւ երկար վանկերի գուգորդութիւններից: Հայ թարգմանիչը յունարէն ոտքերի այս իւրայատկութիւնը տարածել է հայերէն ոտանաւորի բնոյթի վրայ: Երկար վանկը հաւասար է երկու կարն վանկի: Ոտքերը կարող են լինել երկվանկ կամ եռվանկ: Միւս բոլոր գուգորդութիւնները առաջ են գալիս այդ ոտքերից: Ահա թէ ինչու Աբեղեանը հայկական ոտանաւորների քազմազան ձեւերը վերածում է տաղաչափական հիմնական երեք տեսակի. ա) յամբական, բ) անապետեան եւ գ) յամբ-անապետեան: «Էական արժէք չունի, քացատրում է

Արեղեանը- թե ոտանաւորը պարզ ուրեքով է, թէ անդամներով, կամ յամբական ոտանաւորն անապետեան խառնուրդով է կամ, ընդհակառակն, անապետեանը յամբականի խառնուրդով եւ կամ թէ տող մէջ նոյն ուրեքով, կամ անդամները, երկու հատ են, թէ երեք կամ չորս, օրինակ՝ 3+3, 3+3+3, 3+3+3+3, 4+4, 4+4+4, 4+4+4+4, 4+3, 4+4+3, 4+4+4+3, 5+5, 5+5+5 եւ մնացեալքը» (14):

Ինչպէս տեսնա՞նք, էդ. Ջրբաշեանը հայկական ոտանաւորը համարում է վանկական, նրա ռիթմի պայմանը չի համարում շեշտերի դասաւորութիւնը, այլ չափական միաւորների վանկային հաւասարութիւնը եւ գտնում է, որ «հայկական ոտանաւորի կառուցուածքը ճիշտ հասկանալու համար պէտք է, նախ եւ առաջ, հրաժարուել, առօրեայ եւ գիտական գործածութիւնից հանել յամբ-անապետեան խառն ուրեքի մասին յաճախակի հանդիպող դատողութիւնները» (15): Եւ ապա՝ 5, 10 / 5+5/, 15/ 5+5+5/ եւ 20 / 5+5+5+5/ վանկանի տողերով գրուած գործերը Մ. Արեղեանն անուանում է յամբ-անապետեան ոտանաւորներ, նրանց մէջ որոնելով շեշտերի ինչ-որ կարգ: Այնինչ՝ դրանք պարզապէս 5 վանկանի անդամներով զարգացող ոտանաւորներ են, որոնց հիմքը միայն ու միայն հաւասար անդամներն ու կայուն հատածներն են» (16): Հրաժարուեմք յամբ-անապետեան ոտեքն ասելուց, քայց եւ ուշադրութիւն դարձնեմք Արեղեանի մի դիտողութեան վրայ եւս. «Մեր չափերը ոչ միայն հիմնական ձեւերով, այլ նաեւ իրենց ենթատեսակներով ամենամեծ մասամբ գործածուած գտնում ենք 7-11րդ դարերում»: Եւ ապա՝ «Հետագայում 11րդ դարից մինչեւ 20րդ դարը եւ մինչեւ վերջին տարիներս, գործածել են այդ չափերը մի քանի երկրորդական ձեւափոխութիւններ միայն եւ ենթատեսակներ

առաջ քերելով» (17): Ստացւում է այնպէս, որ հայոց հին քանաստեղծութեան չափերը եւս եղել են էապէս նոյնը, ինչ հին դասական եւ միջնադարեան տաղերգութեան ոտանաւորների չափերը: Եթէ սա ճիշտ է, կանոնաւոր տաղաչափութիւն ունեցող ոտանաւորների համար, որոնց ռիթմական պայմանը նրանց չափական միաւորների վանկային-ֆանկական հաւասարութիւնն է, իսկ տարբեր երկարութեան անդամները ռիթմական կանոնաւորութիւն ստեղծելու համար պէտք է հանդէս գան հարեւան տողերի միեւնոյն տեղում, ապա հայոց հին քանաստեղծութիւնն ունի պատկառելի ֆանկութեամբ հոգեւոր երգեր, տաղեր եւ գանձեր, որոնք կարող են ընկալուել իբրեւ սովորական արձակ խօսք, եթէ մենք չթափանցեմք այդ երգերի տաղաչափական կառուցուածքի իւրայատկութիւնների մէջ:

Ա. Ղազինեան

ԱՂԹԻԻ(Ն)ԵՐ ԵՒ ԾԱՆՈԹԱԿՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝

- 1.- Աւ. Բախարբեան, Հին հայոց տաղաչափական արուեստը, Երևան, 1984, էջ 105:
- 2.- Նոյն տեղում, էջ 107:
- 3.- Նոյն տեղում:
- 4.- Մ. Արեղեան, Երկեր, Կ. Ե, Երևան, 1971, էջ 323:
- 5.- Նոյն տեղում, էջ 324:
- 6.- Մ. Արեղեան, Կ. Կ, էջ 617:
- 7.- Մ. Արեղեան, Կ. Ե, էջ 391:
- 8.- էդ. Ջրբաշեան, Պոետիկայի հարցեր, Երևան, 1976, էջ 164:
- 9.- Նոյն տեղում, էջ 159:
- 10.- Նոյն տեղում, էջ 170:
- 11.- Նոյն տեղում, էջ 266:
- 12.- Նոյն տեղում, էջ 178:
- 13.- Տես՝ Աւ. Բախարբեան, նշվ. աշխ. էջ 414:
- 14.- Մ. Արեղեան, Կ. Ե, էջ 329:
- 15.- էդ. Ջրբաշեան, Պոետիկայի հարցեր, էջ 174:
- 16.- Նոյն տեղում, էջ 266:
- 17.- Մ. Արեղեան, Կ. Ե, էջ 332 եւ 333: